A. DEVEJIAN LIBRARY
NEW YORK
Ա. ՏԵՎԷՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

# ԲԱՆԱՍԷՐ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

| | | |
|---|---|---|
| Է ՏԱՐԻ<br>1905 | *Տարեկան՝* 15 *ֆր.* = 6 *ռբլ.*<br>= 3 *դոլար։* | ՅՈՒՆՈՒԱՐ<br>ԹԻՒ Ա |

## ՄԵՐ ՆՈՐ ՇՐՋԱՆԸ

*«Բանասէր»ը* 1905*ի Ա. թիւով խմբագրական զոհողութիւններով եւ շնորհիւ ամրապնդող ու քաջալերող ոյժերու՝ կը թեւակոխէ Է-րդ շրջանը։*

*Խմբագրական ասպարէզին մէջ աշխատութեամբ եւ զոհաբերութեամբ մեր ձեռք բերած փորձառութիւնը՝ դժբախտաբար ապացոյցներով ցոյց տուաւ, որ զուտ բանասիրական թերթ մը չի կրնար Հայոց մէջ նոյն իսկ տպագրական ծախքերը հանել։*

*Իրաւ ալ հայ բանասէրները փոքրամասնութիւն մը կը կազմեն եւ մատի վրայ կը համրուին*

*Քաղաքակիրթ երկիրներու ամէնէն պզտիկի մէջ անգամ երբ մասնագիտական թերթ մը առաջին անգամ երեւան կուգայ, նախ քան բաժանորդները՝ մասնագիտական ընկերութիւններ եւ այդ ճիւղի զարգացումով զբաղուող եւ այդ ճիւղով հետաքրքրուող նախարարութիւններ կապահովեն սկսուած օգտակար ձեռնարկը, որոց թուի բազմապատկութեամբ, տարեկան կամ միանուագ պարգեւներով։*

*Մեր ձեռնարկի սկիզբները կը հաստատէինք թէ մեր մասնագիտական թերթի բացերը գոցող ատաղձներ կամ մեկենասներ պիտի ունենանք ժամանակ մը գեղեցիկ ակնկալութիւններու ոյժով՝ յամառութեամբ շարունակեցինք հրատարակչական գործերնիս։*

*Մէկ կողմէն յուսախաբութիւնը, միւս կողմէն «Բանասէր»ի ընթերցողներու արտայայտած ցանկութիւնները հարկադրեցին մեզ* 1902 *թուէն վերջն ալ «Բանասէր»ը ազգային, գրական եւ գիտական հանդէսի, բազմակողմանութիւն տալու համար ընթերցողներու մեծամասնութեան ըրած դիմումին։*

*Այս վերջին ծրագրով ըրած հրատարակութիւննիս նուազ ապերախտ եղաւ եւ նոյն իսկ մասամբ քաջալերեց մեզ։*

digitised by A.R.A.R.@

Ցանկալով փոխացում տալ այդ դիտումներուն եւ արդի պահանջներուն, որոշեցինք ձեռնարկել «Բանասէր»ի նոր շրջանին, բոլորովին ընդարձակ ծրագրով։

«Բանասէր»ը բազմակողմանի ծանօթութիւններով խնկալէս օժտելու, բազմաբովանդակ եւ համայնագիտական Թերթի մը վերածելու նպատակով, որ փիլիսոփան եւ առաջինը պիտի ըլլայ Հայոց ազգին մէջ հրաւիրեցինք ծանօթ եւ կարող մասնագիտական ոյժեր, այնպէս որ այսուհետեւ նոր ու ընդարձակ ծրագրով, նորակազմ վարչութեան խնամքովը եւ խմբագրութեամբը ճոխացած պիտի երեւնայ «Բանասէր»ը։

## ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

Հետեւեալ ճիւղերուն վրայ գոնէ տարին մէկ կամ երկու յօդուածներ պիտի երեւնան «Բանասէր»ի մէջ։

«Բանասէր»ը երկու գլխաւոր բաժանմունք պիտի ունենայ. առաջին մասը հաւատարիմ պիտի մնայ իր սկզբնաւորութեան օրուան խոստումին. այսինքն պիտի զբաղի հնախօսական, պատմական, լեզուաբանական, յատկապէս բնաշխարհի աշխարհագրական, տեղագրական, եւ ազգագրական հարցերով, չխնայելով լուսաբանութեան համար հարկ եղած պատկերներու տպագրութեան ոչ մի ծախս։

Հայոց հին ու նոր գրականութեան բանասիրական, Թատերական, վիպական կենսագրական, քննական եւայլն եւայլն գրուածքներու հոգը իրենց վրայ առնել յանձնած են Ռուսահայ եւ Թրքահայ ծանօթ գրագէտներ։

«Բանասէր»ի Բ-րդ բաժինը պիտի կրէ Ժողովրդական համալսարան անունը, եւ հոն պիտի ցուցադրուին ժողովրդին իր առօրեայ կեանքին հետ առնչութիւն ունեցող շահեկան յօդուածներ, բոլորովին ժողովրդացած ձեւով բնապատմութեան, բնագիտութեան, տարրաբանութեան, բժշկութեան, երկրագործութեան, ճարտարապետութեան, արուեստագիտութեան, արհեստագիտութեան, տիեզերագրութեան, գիւղատնտեսութեան, առանձին տնտեսութեան, եւն. վրայ։

Իմաստասիրական եւ ընկերական գիտութիւնները, ինչպէս փիլիսոփայական, ընկերական, հոգեբանական, կրօնական (քննական), մանկավարժական եւայլն հարցերը «Բանասէր»ի ծրագրէն դուրս չպիտի մնան։

Արդ՝ խնդիր է գիտնալ թէ ազգը ինչպէս պիտի վերաբերի այս ճոխացած հրատարակութեան հանդէպ, որպէս զի կարողանայ ան յառաջիկայ շրջանին զոհողութիւն մ՚աւելի ընել, փոխանակ 15 ֆրանքի՝ 10ի իջեցնելով։

Ուրիշ համոզմունքով որ տարի մը ետքը «Բանասէր»ի այս էջով պիտի արտայայտենք մեր գոհունակութեան զգացմունքները, կը սկսինք մեր գործին։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ԲԱՆԱՍԷՐ»Ի

digitised by A.R.A.R.@